

<b>ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>				
<i>Հ/Հ</i>	<i>Հետազոտության անվանումը</i>	<i>Անցկացման ժամկետը</i>	<i>Նպատակը (հիմնավորումը)</i>	<i>Նյութերի ամփոփման ժամկետը</i>
<b>1</b>	<b>2</b>	<b>3</b>	<b>4</b>	<b>5</b>
1	Սպառման ապրանքների գների և ծառայությունների սակագների դիտարկում	հունվար-դեկտեմբեր	Սպառողական գների ինդեքսի հաշվարկը	2021-2022 թվականների ընթացքում
2	Բիզնես-ռեզիստր	հունվար-փետրվար	Տնտեսավարող սուբյեկտների բիզնես-ռեզիստրի վարման համար անհրաժեշտ տվյալների արդիականացումը, համալրումը և ամբողջացումը	մարտ-մայիս
3.	Անհատական բնակարանային շինարարության դիտարկում	փետրվար-մարտ	Անհատական բնակարանային շինարարության վերաբերյալ առկա տվյալների արդիականացումը, համալրումը և ամբողջացումը	ապրիլ
4	Տարհանված ընտանիքների կենսապայմանների ընտրանքային հետազոտություն	մարտ-հունիս	Հիմնական բնակավայրերից տարհանված ընտանիքների կենսապայմանների ուսումնասիրությունը, սոցիալական հիմնահարցերի բացահայտումը	հուլիս-սեպտեմբեր
5	Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված ընտրանքային հետազոտություն	հունվար-դեկտեմբեր	Արցախի Հանրապետությունում աղքատության մակարդակի և սոցիալական իրավիճակի վերաբերյալ տեղեկությունների ստացումը	2021-2022 թվականների ընթացքում
6	Աշխատուժի ընտրանքային հետազոտություն	հունվար-դեկտեմբեր	Արցախի Հանրապետության աշխատանքի շուկան բնութագրող տեղեկատվության ապահովում՝ աշխատանքային ռեսուրսները, աշխատուժը, աշխատուժից դուրս բնակչությունը, զբաղվածությունը (այդ թվում՝ նաև ֆորմալ և ոչ ֆորմալ), աշխատուժի թերօգտագործումը՝ թերզբաղվածությունը, գործազրկությունն ըստ ժողովրդագրական, կրթական, սոցիալ-տնտեսական և այլ բնութագրերի՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության մեթոդաբանությամբ, Աշխատանքի վիճակագիրների 19-րդ միջազգային համաժողովի կողմից ընդունված բանաձևերի պահանջներին համապատասխան	2021-2022 թվականների ընթացքում